ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2023 թվական թիվ 307-Ա

ՎԻԿՏՈՐՅԱ ՆՈՒԲԱՐԻ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ԹԻՎ 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, 16-րդ հոդվածի 8-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի թիվ 181-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգի» 33-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 1-ի թիվ 191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 3-ի դրական եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Վիկտորյա Նուբարի Դեմիրճյանին 2023 թվականի նոյեմբերի 9-ից նշանակել «ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում՝ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 /հինգ/ տարի ժամկետով:

Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

11.11.2023

X

2023թ նոյեմբերի 9
ք.Իջևան